



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՈՇՈՒՄ № 31Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ  
2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի ԹԻՎ 16Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

## ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011 թվականի օգոստոսի 26-ի «ՀՀ առաջին ատյանի դատարանների նստավայրերը և դատավորների մասնագիտացումների ցանկը հաստատելու մասին» թիվ 16Լ որոշման հավելվածի 9-րդ աղյուսակի 3-րդ կետի «Դատական տարածք» սյունակի «Հրազդանի վարչական տարածք» բառերից հետո լրացնել «, սնանկության գործերով՝ Կոտայքի մարզի վարչական տարածք» բառերը, իսկ «Մասնագիտացում» սյունակի «Զաղաքացիական» բառից հետո լրացնել «/Սնանկության/» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հուլիսի 19-ից:

Հայաստանի Հանրապետության  
դատարանների նախագահների  
խորհրդի նախագահ

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

2017թ. հուլիսի 18  
ք. Երևան